ԾԱՏՈՒՐ ՊԱՎԵԼԻ ԱՂԱՅԱՆ

Սովետական պատմագիտությունը ծանր կորուստ կրեց. դեկտեմբերի 3-ին կյանքից հեռացավ նրա կարկառուն դեմքերից մեկը՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ծ. Պ. Աղայանը։

Ծատուր Աղայանը ծնվել է 1912 թ., Գանձակի նահանգի Փիփ գյուղում։ Կիրովաբադի մանկավարժական ուսումնարանն ավարտելուց հետո երիտասարդ Ծ. Աղայանը հայրենի Արցախում մի քանի տարի նվիրվում է մատաղ սերնդի դաստիարակության գործին։ 1933—1937 թթ. նա ընդունվում և գերազանցությամբ ավարտում է Միության ժամանակի հասարակագիտական նշանավոր հաստատություններից մեկը՝ Մոսկվայի պատմության, փիլիսոփայության և գրականության ինստիտուտը, իսկ 1938—1941 թթ.՝ Լոմոնոսովի անվան համալսարանի ասպիրանտուրան, որտեղ էլ 1941 թ. պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա։

1941—1948 թթ. Ծ. Աղայանը գիտամանկավարժական աշխատանք է կատարում Բաքվի մանկավարժական ինստիտուտում, համալսարանում և Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում։ 1948 թ. Երևան տեղափոխվելուց հետո սկսում է գիտնականի գիտամանկավարժական և կուսակցական-հասարակական գործունեության արգասավոր շրջանը։ ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի բաժնի վարիչ, ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի դիրեկտոր, ՀԿԿ Կենտկոմի գիտության և կուլտուրայի բաժնի վարիչ, ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, «Լրաբեր հասարակական գիտություններ» ամսագրի գլխավոր խմբագիր, Երևանի պետական համալսարանի կուսակցության պատմության ամբիոնի վարիչ—սա սոսկ ոչ լրիվ թվարկումն է այն պաշտոնների, որոնք սրտի և հոգու ողջ նվիրումով վարել է Ծ. Աղայանը, միաժամանակ մինչև կյանքի վերջին պահն իսկ մնալով անդադրում գիտնականի ու մանկավարժի պատվավոր դիրքերում։

Լայն է Աղայան-պատմաբանի թեմատիկ ընդգրկումների շրջանակը։ Քաղաքացիական և հայրենասիրական շնչով գրված նրա մենագրությունները արծարծում են բազմաբնույթ և տարատեսակ խնդիրներ, ցեմենտվելով այն ուղղություններ մեջ, որոնց էությունը հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման պատմությունն է նոր և նորագույն ժամանակներում։ Նա մնայուն մենագրություններ է թողել հայ ժողովրդի նշված ժամանակաշրջանների պատմության այնպիսի կարևոր բնագավառների հետազոտման ուղղությամբ, որպիսիք են Հայաստանի և Անդրկովկասի ազգարային հարաբերությունները, բանվորադյուղացիական հեղափոխական շարժումները, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, Անդրկովկասի

ժողովուրդների դարավոր բարեկամության, հայ-ռուսական հարաբերությունների, հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարցերը։ Թեմատիկ ծավալուն ընդգրկումը երբեք չի խնգարել նրան հրապարակ հանելու խոր վերլուծություններով և ընդհանրացումներով հարուստ աշխատություններ։ Ընդհակառակը, նրա հմուտ գրչի տակ փայլուն դրսևորում են գտել այն աղերսները, որոնք այս կամ այն չափով հատուկ են նշված թեմաներին։ Դա երևում է նրա գրեթե բոլոր գործերում՝ վկայելով հեղինակի պատմագիտական թեմաների ընտրության լայնախոհ մոտեցումը։

Ծ. Պ. Աղայանի վերլուծական մտքի և տիտանական աշխատասիրության փայլուն արգասիքն են «Ազրարային ռեֆորմը Ադրբեջանում», «Հեղափոխական շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.», «Հոկտեմբերյան հեղափոխությունը և հայ ժողովրդի ազատագրումը», «Մեծ Հոկտեմբերը և Հայաստանի աշխատավորության պայքարը սովետական իշխանության հաղթանակի համար», «Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությունը», «Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում», «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» և այլ մենագրություններ։ Դրանք, իրավամբ, սովետահայ պատմագիտական մտքի վերջին երկու-երեք տասնամյակի խոշոր նվաճումներից են և հույժ արժեքավոր ներդրում նրա ոսկե ֆոնդը։ Միաժամանակ այդ աշխատությունները կենդանի վկա են պատմագիտական և աղբյուրագիտական այն վիթխարի աշխատանքի, որով օժտված են լինում գիտության նվիրյալներից միայն քչերը։

Համբավավոր պատմաբանին մեզանում և սփյուռքում մեծ մասսայականություն բերեց մանավանդ «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» ծավալուն մենագրությունը (1976 թ.)։ Աշխատության մեջ փաստական հարուստ նյութի ընդգրկմամբ, մանավանդ նրա համակողմանի քննմամբ ուսումնասիրված են հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառները, նրա ընթացքն ու զարգացման փուլերը, ելևէջները, դառնադեռ իրականության հետ այդ շարժման ունեցած բախումները և դրանց հուսահատ անդրադարձումները։ Հայ ժողովրդի ոչ հեռավոր անցյալի մաքառումներն ու հերոսապատումներն արծարծող այս մենագրությունը, հարցերի գիտական ընդգրկման խորությամբ հանդերձ, դարձավ ընթերցող ամենալայն շրջանների սեղանի գիրքը։

Բնությունը Ծ. Աղայանին օժտել էր գիտության մեծ կազմակերպչի տաղանդով։ Նրա անմիջական մասնակցությամբ, ղեկավարությամբ կամ էլ խմբագրությամբ հրապարակ են հանվել կոլեկտիվ շատ աշխատություններ, և դրանց թվում առաջին հերթին նշելի են Հայաստանի կոմկուսի պատմության ուրվագծերը, հայ ժողովրդի պատմության ակադեմիական 8-հատորյա հրատարակության 5, 6 և 7-րդ հատորները, «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» փաստաթղթերի ժողովածուի երկու հատորները և այլ գործեր։

Ծ. Աղայանը անցել է մանկավարժական աշխատանքի բեղմնավոր ուղի՝ բարձս ամենալայն իմաստով։ Իր մանկավարժական գործունեությունը սկսելով դպրոցական ուսուցչի պաշտոնից, նա հասավ բարձրագույն դպրոցի պրոֆեսոր-դասախոսի պատվավոր աստիճանին։ Տարիներ շարունակ նա պատմագիտական առարկաներ է դասավանդել հայկական դպրոցներում, Ադրբեջանի և Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում։ Նրա ձեռքի տակ աճել են մի քանի տասնյակ գիտնական-պատմաբաններ, որոնցից շատերը գիտության թեկնածուներ են, դոկտորներ, կուսակցական ու պետական ճանաչված աշխատողներ։ Նրանք բոլորն էլ խորին երախտագիտությամբ են հիշում իրենց գիտական դաստիարակին, որը իսկական մեծերին հատուկ հոգատարությամբ ու համբերատարությամբ, մարդկանց, մանավանդ իր սաներին օգնելու և աջակցելու լայնահուն մարդկային խառնվածքով և ասպնջական բնավորությամբ արժանացել էր բոլորի խորին հարգանքին և ջերմ սիրուն։

Կուսակցությունն ու կառավարությունը բարձր են գնահատել ակադեմիկոս Ծ. Աղայանի ծառայությունները, նրան պարգևատրելով Աշխատանքային կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններով, մեդալներով ու պատվոգրերով։ Նրան շնորհվել է ՀՍՍՀ Գիտության վաստակավոր գործչի կոչում, նա ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ։

Ս. Աղայանը մեկանից հեռացավ իր արդասավոր գործունեության բուռն շրջանում, երբ հրատարակման ընթացքի մեջ են նրա հեղինակած հայ ժողովրդի պատկերազարդ պատմությունը, հայ ազատագրական շարժմանը նվիրված երկրորդ մենագրությունը և իր լույս ընծայմանն է սպասում Սարդարապատի հերոսամարտին նվիրված նրա ծավալուն գործը։ Ավա՜ղ, նրան չվիճակվեց հրապարակի վրա տեսնելու իր վերջին տարիների արտամաղ աշխատանքի առհավատչյան հանդիսացող այդ գործերը։

Ակադեմիկոս Ս. Պ. Աղայանի՝ ականավոր պատմաբանի, ջերմ հայրենասերի, ազնիվ քաղաքացու, հմայիչ մարդու հիշատակը միշտ վառ կմնա նրա ընկերների, բարեկամների, աշակերտների ու ծանոթների և բոլոր նրանց սրտերում, ում համար թանկ է գիտության ազնիվ նվիրյալների ծառայությունն իրենց հարազատ ժողովրդին։

ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՈՅԱՆ
ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ԱԲԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

«Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրական կոլեգիան և խմբագրությունը խոր վիշտ են ապրում ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, ամսագրի նախկին գլխավոր խմբագիր և խմբագրական կոլեգիայի անդամ, սովետական նշանավոր պատմաբան Մատուր Պավելի Աղայանի մահվան առթիվ։